Բարերանե՜ր, խոնարհվում ենք ձեր առաջ՝
Երախտապա՜րտ, հավատարի՜մ, պարտաճանա՜չ,
Հավատացէ՛ք՝ ալեկոծվու՜մ է մեր հոգում
Վրեժն՝ հորդող, ձեր իսկ լույսից՝ մեծաշառաջ …

Առանց պայքարի ո՛չ ոք չի հաղթում …

Գիտենք որ հանգիստ չ՛ունի ձեր հոգին
Քանի դեռ հարցեր ունենք ահագին,
Իսկ ձեր վրեժի պատգամն հուզում է
Մեզնից ավելի ուրիշ ո՛չ ոքին …

Մոխիրն է վերջը մեն մի կրակի …

Մինչ այդ՝ խո՜ր հարգանք ձեր հիշատակին,
Կյանք՝ մեր Տաճարին լուսո, թանկագին,
Վստահությամբ որ ամեն հայ սրտում
Ունենք հաստատ վեմ՝ հավեր՜ժ ձեր կյանքին …

Երանի՜ այն մեծ օրվան, երբ ձեր ոգու երազանքով ու պայքարով,
Դեռ ուռճացող մեր Սփյուռքի եւ դեռ գերված մեր հողերի
Աղջամուղջը թողնելու ենք մեր ետեւում …

Ընդմիշտ երախտապարտ,
Ի դիմաց Մելգոնյան հոգեհարազատ
Եղբայրների եւ Քույրերի՝

Գասպար Գասպարյան